ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

„02, հոկտեմբերի 2015թ. Թիվ 72-Ա

## ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

Հաստատել Արտաշատի քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 2-ի արտահերթ նիստի օ ր ա կ ա ր գ ը՝

1/73-Ն/ ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԻ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Մ.ՄԵԼԻՔՅԱՆ/

2 /74-Ա/ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԱԽԿԻՆՈՒՄ ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՊԵՍ ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ՄՈՆՏԱԺՎԱԾ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՂԲԱՄԱՆՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՔԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԳՆՈՒՄՆԵՐԸ, ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ, ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Մ.ՄԵԼԻՔՅԱՆ/

Կողմ - 9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Բենիամինյան Կարեն
Գալստյան Արթուր
Թադևոսյան Արման
Հայրապետյան Ռուզան

Հովհաննիսյան Վազգեն

Մնացականյան Հարություն

Պողոսյան Գաբրիել

Վարդազարյան Վաչագան

Վարդանյան Ռազմիկ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐԳԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

„02„ նոյեմբերի 2015թ. ԹԻՎ 73-Ն

## ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԻ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, „Բյուջետային համակարգի մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ, 28-րդ հոդվածների և 78-րդ հոդվածի 1-ին մասի.

Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Թույլատրել՝

- 04.05.01.52 գործառնական դասակարգման /ա/բ ծածկի հիմնանորոգում/ 5113 հոդվածը պակասեցնել 24500000 /քսանչորս միլիոն հինգ հարյուր հազար/ դրամով.
- 11.01.02.52 գործառնական դասակարգման /ֆոնդային բյուջեի պահուստային ֆոնդ/ 4891 հոդվածն ավելացնել 21500000 /քսանմեկ միլիոն հինգ հարյուր հազար / դրամով.
- 08.01.01.52 գործառնական դասակարգման /հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում և պահպանում/ 5129 հոդվածն ավելացնել 1000000 /մեկ միլիոն/ դրամով, հանգստի գոտիների համար անհրաժեշտ նստարանների ձեռք բերման ծախսերն ապահովելու համար.
- 05.01.01.51 գործառնական դասակարգման /աղբահանություն և սանիտարական մաքրում/ 5129 հոդվածն ավելացնել 1000000 /մեկ միլիոն/ դրամով Արտաշատ քաղաքի սանիտարական վիճակի բարելավման նպատակով անհրաժեշտ աղբամանների ձեռք բերման ծախսերն ապահովելու համար.
- 04.05.01.51 գործառնական դասակարգման /ա/բ ծածկի վերանորոգում և պահպանում/ 5113 հոդվածն ավելացնել 1000000 /մեկ միլիոն/ դրամով, փողոցի ասֆալտբետոնյա ծածկի փոսային վերանորոգման հետ կապված ծախսերն ապահովելու համար:

Կողմ - 9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Բենիամինյան Կարեն
Գալստյան Արթուր
Թադևոսյան Արման

Հայրապետյան Ռուզան

Հովհաննիսյան Վազգեն

Մնացականյան Հարություն

Պողոսյան Գաբրիել

Վարդազարյան Վաչագան

Վարդանյան Ռազմիկ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԳԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ**
**ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

---

„02„ նոյեմբերի 2015թ. ԹԻՎ 74-Ա

**2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԱԽԿԻՆՈՒՄ ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՊԵՍ ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ՄՈՆՏԱԺՎԱԾ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՂԲԱՄԱՆՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՔԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԳՆՈՒՄՆԵՐԸ, ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ, ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

2015 թ. Արտաշատի քաղաքապետարանի կարիքների համար բազմաբնակարան բնակելի շենքերի հարակից բակային տարածքներում կառուցվել են մանկական խաղահրապարակներ՝ մոնտաժված սարքավորումների միջոցով, որի արդյունքում անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու լրացուցիչ սարքավորումներ՝ նույն մատակարարի կողմից, այլ խաղահրապարակներ կառուցելու նպատակով:

Արտաշատ քաղաքի սանիտարական վիճակի բարելավման նպատակով կատարվող աշխատանքներից ելնելով անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել լրացուցիչ քանակությամբ աղբամաններ նույն մատակարարի կողմից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության „Գնումների մասին„ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով ու հաշվի առնելով այն, որ մանկական խաղահրապարակների կառուցման և քաղաքի սանիտարական վիճակի բարելավման աշխատանքները շարունակական են.

Քաղաքային համայնքի ավագանին **Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

Թույլատրել 2015 թվականի Արտաշատի քաղաքապետարանի կարիքների համար բազմաբնակարան բնակելի շենքերի բակային տարածքներում մանկական խաղահրապարակներ կառուցելու նպատակով անհրաժեշտ մոնտաժված սարքավորումների լրացուցիչ քանակության, ինչպես նաև Արտաշատ քաղաքի սանիտարական վիճակի բարելավման համար անհրաժեշտ աղբամանների լրացուցիչ քանակության ձեռք բերման գնումները կատարել առանց գնումների

հայտարարությունը նախապես հրապարակելու՝ բանակցային ընթացակարգով, նախկին մատակարարների հետ:

Կողմ - 9 | դեմ-0 | Ձեռնպահ-0

Բենիամինյան Կարեն
Գալստյան Արթուր
Թադևոսյան Արման
Հայրապետյան Ռուզան
Հովհաննիսյան Վազգեն
Մնացականյան Հարություն
Պողոսյան Գաբրիել
Վարդազարյան Վաչագան
Վարդանյան Ռազմիկ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԳԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ